ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 12 » նոյեմբեր 2026թ. No 6676 - Ա

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԻԺՖԱՐՄ ԲԸ, 603105, Ք. ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴ, ՍԱԼԳԱՆՍԿԱՅԱ Փ., 7, ՄԱՍՆԱՇԵՆՔ 1- ՈՐԱԿԻ ԵՎ ԲԱՑ ԹՈՂՆՄԱՆ ՀՍԿՈՂ, ՆԻԺՖԱՐՄ ԲԸ, 603105, Ք. ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴ, ՍԱԼԳԱՆՍԿԱՅԱ Փ., 7, ՌՈՒՍԱՍՏԱՆ- ԲԱԼՔ ԱՐՏԱԴՐՈՂ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՆԻԺՖԱՐՄ ԲԸ, 603105, Ք. ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴ, ՍԱԼԳԱՆՍԿԱՅԱ Փ., 7, ՌՈՒՍԱՍՏԱՆ «ՔՈՆԴՐՕՔՍԻԴ ԱՐՏՐԱ ՔՈՆԴՐՈԻՏԻՆԻ ՍՈՒԼՖԱՏ (ՔՈՆԴՐՈԻՏԻՆ ՍՈՒԼՖԱՏ ՆԱՏՐԻՈՒՄ) ՔՍՈՒՔ ԱՐՏԱՔԻՆ ԿԻՐԱՌՄԱՆ 50ՄԳ/Գ; 30Գ ԱԼՅՈՒՄԻՆԵ ՊԱՐԿՈՒՃ ԿԱՄ ՊԼԱՍՏԻԿԵ ՊԱՐԿՈՒՃ» ԴԵՂԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դեղի գրանցումը, գրանցումը մերժելը, կասեցնելը և ուժը կորցրած ճանաչելը փորձագիտական եզրակացության հիման վրա իրականացնում է Առողջապահության հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի՝ հետգրանցումային փոփոխությունների իրականացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փորձագիտական կազմակերպության կողմից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 18-ի N 1122-Ն որոշման 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային

կազմակերպության կողմից տրված Ռուսաստանի Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7, մասնաշենք 1- որակի և բաց թողնման հսկող, Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7, Ռուսաստան- բալք արտադրող, փաթեթավորող արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7, Ռուսաստան «Քոնդրօքսիդ Արտրա քոնդրոիտինի սուլֆատ (քոնդրոիտին սուլֆատ նատրիում) քսուք արտաքին կիրառման 50մգ/գ; 30գ ալյումինե պարկուճ կամ պլաստիկե պարկուճ» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ ԼՊ-№003306-ԳՊ-ԱՄ առ 15.10.2026թ. բացասական եզրակացության համաձայն՝ հայտը մերժվում է հիմք ընդունելով ռեֆերենտ երկրի կողմից տրված բացասական եզրակացությունը (իրավական հիմք՝ 28.01.2026 N25-6-4349953/Изм/Р/О):

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 2 հավելվածի 58-րդ կետի՝ դեղի հետգրանցումային փոփոխություններն մերժելու վերաբերյալ հրամանն ընդունվում է փորձագիտական եզրակացությունը ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետը, N 2 հավելվածի 58-րդ կետը, ինչպես նաև իրավական և վերոգրյալ փաստական հիմքերից ելնելով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Ռուսաստանի Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7, մասնաշենք 1- որակի և բաց թողնման հսկող, Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7, Ռուսաստան- բալք արտադրող, փաթեթավորող արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7, Ռուսաստան «Քոնդրօքսիդ Արտրա քոնդրոիտինի սուլֆատ (քոնդրոիտին սուլֆատ նատրիում) քսուք արտաքին կիրառման 50մգ/գ; 30գ ալյումինե պարկուճ կամ պլաստիկե պարկուճ» դեղի հետգրանցումային փոփոխությունների գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանը երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ